15· ԲՕՋ ՄԷՋԻՆ·—Մօլա Ջատէի արևելքն 15 տուն։

16· ԱՍԱՖ·—Բօզ-մէջընի արևելքն 20 տուն՝ հանդէպ Խաստուրայ։

17· ԱՍԱՖԻ ԳՈՄ·—$^1/_2$ ժամ գիւղից վեր ձորի մէջ՝ 3 տուն։

18· ԱԲԱՍ·—Ասաֆի արևելքն $^3/_4$ ժամ հանդէպ Խաստուրայ՝ 15 տուն։

Վանքի և գերեզմաններու հետքեր կը տեսնուին Բիւրապատ, Մարտոյ, Ռամկան, Պետր, Կոփալ, Շահնազար, և Աբաս գիւղօրէից մէջ։

Բօզ մէջին երկու ջրոց միացած տեղն է։

Պէտրէն յԱնդամ անցնելու համար Մզրախայ կրճէն անցնելու ենք։

Կորոշանայ ձորն Մէարգամիր սարէն դէպի Շեռեանայ գլուխ խոնարհած ձոր մի է։

Մարտոյ գիւղն 1 ժամ Խաստուրայ արևմուտքն է և 1 ժամ ևս Ասաֆի հիւսիսային արևմուտք Շեռեան գետոյն ձախ ափէն 5 վայրկեան հեռի, 30 տուն գաղթական թուրք և ք· բն· ունի։

Գիւղի յարևելս քիչ բարձրութեան վերայ կայ հայկական գերեզմանատուն մի, որ ունի 2000 էն աւելի տապանաքարեր, խաչքարեր, որք մինչև 1880 թուականը անարատ մնացած էին քրդաց ձեռքը, իսկ թարքեամայ թուրքեր այդ գիւղն հաստատուելէն ի վեր արձանագրութիւն ունեցող ընտիր սրբատաշ քարերն հիմնայատակ արած են և որոց մէկ մասն ևս հողի տակ ծածկուած կան։